

ՓՈՒԵՄԲՆՆՍԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

ԴԱՆԻԱՅԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ «ԿԼԻՍԱՅԻ
ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՍԱՄԻՆ» ՍԱԿ-Ի ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ
ԿԻՈՏՈՅԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ
ՀԱՍԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՍԱՄԻՆ

Դանիայի Կառավարությունը, ի դեմս շրջակա միջավայրի նախարարության, Դանիայի շրջակա միջավայրի պահպանության գործակալության, սույն Հուշագրի նպատակով հանդիսանալով որպես Դանիայի իրավասու մարմին, այսուհետ՝ դանիական կողմ,

և

Հայաստանի Հանրապետության Կառավարությունը, ի դեմս Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության, սույն Հուշագրի նպատակով հանդիսանալով որպես իրավասու մարմին, այսուհետ՝ հայկական կողմ,

հաշվի առնելով, որ երկու կողմերն էլ հանդիսանում են «Կլիմայի փոփոխության մասին» Միավորված ազգերի կազմակերպության շրջանակային Կոնվենցիայի կողմեր (ԿՓՄԱԿԸԿ) և վավերացրել են այդ Կոնվենցիայի Կիոտոյի արձանագրությունը,

նպատակ ունենալով իրականացնել Կիոտոյի արձանագրության 12-րդ հոդվածի դրույթները և նրա հիմքում ընկած որոշումները՝ բնութանված ԿՓՄԱԿԸԿ կողմերի հանդիսացող կոնֆերանսի կողմից, որը հանդիսանում է Կիոտոյի արձանագրության կողմերի խորհրդակցություն (ԿԿ/ԿԽ)՝ նվիրված նրա իրականացման ուղեցույցներին, որոնք նախատեսում են փոխանցում ԿՓՄԱԿԸԿ-ի 1-ին Հավելվածում չընդգրկված կողմից 1-ին Հավելվածում ընդգրկված կողմին մաքուր զարգացման մեխանիզմի (ՄՁՄ) նախագծերի իրականացման արդյունքում առաջացած արտանետումների սերտիֆիկացված կրճատումների ծավալները (ՍՍԿ) նպատակ ունենալով աջակցել, Կիոտոյի արձանագրության 3-րդ հոդվածի համաձայն, այդ երկրի արտանետումների քանակական սահմանափակման և կրճատման պարտավորությունների մասնակի կատարմանը,

բնդգծելով Կիոտոյի արձանագրությանը սահմանված պարտավորությունների կատարման համար ներքին քաղաքականության և ձեռնարկված միջոցների կարևորությունը և այդ արձանագրության 12-րդ հոդվածի համաձայն՝ լրացուցիչ գործունեության դերը,

բնդունելով Կիոտոյի արձանագրության 12-րդ հոդվածի վերաբերյալ ԿԿ/ԿԽ կողմից հետագա ցանկացած ուղեցույցի մշակումը, ինչպես նաև հաշվի առնելով ԿԿ/ԿԽ ապագա ցանկացած որոշումը, որը կապված կլինի ՄՁՄ-ի հրատապ և արդյունավետ իրականացման հետ,

սպասելով Կիոտոյի արձանագրության ուժի մեջ մտնելուն,

հաշվի առնելով, որ, Կիոտոյի արձանագրության 12-րդ հոդվածի համաձայն, ՄՁՄ բնագավառում համագործակցությունը կնպաստի կայուն զարգացման գործընթացին և կհանգեցնի ջերմոցային գազերի արտանետումների կրճատման,

ցանկանալով ցուցաբերել քաղաքական կամք՝ սկսելու և իրականացնելու երկարաժամկետ համագործակցություն ՄՁՄ շրջանակներում և աջակցելու ՄՁՄ հրատապ և արդյունավետ իրականացմանը,

համաձայնեցին հետևյալի մասին.

Հոդված 1 Նպատակը

Սույն Հուշագիրը կկիրառվի այն ընթացակարգերի նկատմամբ, որոնք, Կիտտոյի արձանագրության 12-րդ հոդվածին համապատասխան, դյուրացնում են Հայաստանի Հանրապետությունում օտերմոցային գազերի արտանետումների կրճատման հետ կապված ծրագրի գործողությունների մշակումը և իրականացումը, ինչպես նաև փոխանցումը Գանիային արտանետումների սերտիֆիկացված կրճատումների համաձայնեցված հատվածը, որը բխում է այդ ծրագրի իրականացումից:

Հոդված 2 Իրավասու մարմիններ

Գանիայի Թագավորության շրջակա միջավայրի նախարարությունը և Գանիայի շրջակա միջավայրի պահպանության գործակալությունը, Հայաստանի Հանրապետության քնապահպանության նախարարությունը ծրագրերի իրականացման վերաբերյալ համաձայնագրերի իրավասու մարմիններն են: ՄՁՄ յուրաքանչյուր ծրագրի համար կնախապատրաստվի ծրագրի վերաբերյալ համաձայնագիր, որը կրնդգրկի բոլոր համապատասխան հարցերը առանձին ծրագրերի իրականացումն ապահովելու համար:

Հոդված 3 Հայկական կողմի աջակցությունը

Հայկական կողմը կաջակցի ծրագրերի մշակմանը և իրականացմանը՝ ՄՁՄ ծրագրերի իրականացման հարցում շահագրգռված հնարավոր շահառուներին աջակցելով տեղեկատվության տրամադրմամբ և, Կիտտոյի արձանագրության 12-րդ հոդվածին համապատասխան, պաշտոնապես հաստատելով ծրագրերը որպես ՄՁՄ ծրագրեր, որոնք համապատասխանում են նմանատիպ ծրագրերին ներկայացվող ազգային պահանջներին:

Ծրագրի վերաբերյալ համաձայնագիրը պետք է սլարունակի հայկական կողմի պարտադիր հաստատումը այն մասին, որ նա կփոխանցի, Կիտտոյի արձանագրության 12-րդ հոդվածին և ԿԿ/ԿԽ կողմից ընդունված ուղեցույցներին համապատասխան, ծրագրի վերաբերյալ համաձայնագրի արդյունքում մշակված ԱՄԿ-ները դանիական կողմին:

Հայկական կողմը կապահովի համաձայնեցված և նախապես վճարված ԱՄԿ-ների փոխանցումը յուրաքանչյուր ծրագրի համար համաձայնեցված ժամանակահատվածում, ինչպես նշված է ծրագրի վերաբերյալ համաձայնագրում, քանի դեռ ԱՄԿ-ները գոյություն կունենան որպես ՄՁՄ-երի ծրագրերի իրականացման արդյունք, ինչը կարող է ստուգվել անկախ մարմնի կողմից:

Ծրագրի վերաբերյալ համաձայնագիրը նույնպես կհաստատի, որ փոխանցումը կազատվի ՄՁՄ-ի որևէ հատուկ վճարումից, որը կզերազանցի ԱՄԿ-ների համաձայնեցված վճարումը:

Հայկական կողմը կորոշի և դանիական կողմին կներկայացնի ֆինանսավորման համար ընտրված ծրագրերի ցուցակը: Առաջնային խնդիրները կորոշվեն Կողմերի միջև՝ բանակցությունների արդյունքում:

Հոդված 4 Դանիական կողմի աջակցությունը

Դանիական կողմը կաջակցի ԱՄԿ-ների ծրագրերի մշակմանը և իրականացմանը այդ ծրագրերից բխող ԱՄԿ-ների ձեռքբերման միջոցով կամ ընդունելով և գրանցելով ԱՄԿ-ները, որոնք ձեռք են բերվել իրենց ԱՄԿ-ների բաժինների հիմնական սեփականատերեր հանդիսացող հայկական կողմի մասնավոր կառույցների կողմից: Դանիական կողմը, Կիտտոյի արձանագրության 12-րդ հոդվածին համապատասխան, կհաստատի ՄՁՄ ծրագրերը՝ ստորագրելով ծրագրի վերաբերյալ համաձայնագիրը:

Դանիական կողմը կտեղեկացնի հայկական կողմին համապատասխան լիազորագրերը մասնավոր ֆիրմաներին տրամադրելու մասին:

Դանիական կողմի աջակցությունը Հայաստանի Հանրապետությունում իրականացվող կոնկրետ ծրագրում կարող է օգտագործվել միայն կոնկրետ ծրագրի համար:

Հոդված 5 Վճարման սխեմաներ

ՄՁՄ ծրագրերի վճարման սխեմաները կհամաձայնեցվեն յուրաքանչյուր առանձին դեպքի համար և պաշտոնապես կարտացոլվեն ծրագրերի վերաբերյալ համաձայնագրերում:

Հոդված 6 Ծրագրերի անկախ հաստատում, ստուգում և սերտիֆիկացում

Ծրագրերի հաստատումը, ստուգումը և սերտիֆիկացումը կիրականացվեն անկախ կազմակերպությունների կողմից, որոնք հավատարմագրված են գալծադիր մարմնի կողմից՝ ԿՓՄԱԿՇԿ-ի համաձայն: Երկու Կողմերն էլ կաջակցեն այդ կազմակերպությունների աշխատանքներին:

Հոդված 7 Ուժի մեջ մտնելը

Սույն Հուշագիրը ուժի մեջ կմտնի դրա համար անհրաժեշտ՝ Կողմերի կողմից ներքին ընթացակարգերի կատարման մասին վերջին ծանուցման օրվանից: Հուշագիրը կնրվում է 5 տարի ժամկետով և ինքնաբերաբար կերկարաձգվի ևս 5 տարով, եթե դրա գործողության ավարտից առնվազն 6 ամիս առաջ Կողմերից մեկը գրավոր չտեղեկացնի մյուս Կողմին Հուշագիրը դադարեցնելու մտադրության մասին:

Հոդված 8 Փոփոխություններ և գործողության վաղաժամկետ դադարեցում

Դանիայի Թագավորության կամ Հայաստանի Հանրապետության ազգային համապատասխան քաղաքականության զգալի փոփոխությունների դեպքում, որոնց արդյունքում կարող են առաջանալ ծրագրի կատարողների և/կամ ներդրողների կողմից ԱՄԿ-ների ընդունման և փոխանցման դժվարություններ, երկու Կողմերն էլ կներդնեն ջանքեր ԱՄԿ-ները, որոնք համաձայնեցված են ծրագրի վերաբերյալ համաձայնագրում, իրականում փոխանցելու համար:

Կողմերը ունեն իրավունք գրավոր տեղեկացնել մյուս կողմին առաջարկվող փոփոխությունների կամ սովյալ Հուշագրի գործողության դադարեցման մասին: Ծրագրերը, որոնք իրականացվում են սույն Հուշագրի շրջանակներում, ուժի մեջ կլինեն մինչև ծրագրի վերաբերյալ համաձայնագրերով նախատեսված ԱՄԿ-ների փոխանցվելը: Հուշագիրն ուժի մեջ կլինի այդ ծրագրերի համար:

Ստորագրված է *Երևան* քաղաքում 2004 թ. *Յուլի 17*-ին, երկու բևորինակով, յուրաքանչյուրը՝ անգլերեն և հայերեն: Սույն Հուշագրի մեկնարանման ժամանակ տարաձայնություն առաջանալու դեպքում նախապատվությունը կարվի անգլերեն տեքստին:

Դանիայի Թագավորության
Կառավարության կողմից՝



Հայաստանի Հանրապետության
Կառավարության կողմից՝

